

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:
Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):
Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԵԿՈՂ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, Նոյն դիւրով և Նոյն պրոգրամայով: Մինք կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊՐԱԿԱՆԱԿԱՆ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարաշվիլի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հա-
ցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».
Առաջիկայ տարեկան «ՄՇԱԿ» պրոգրամը Նոյնը կը լինի, այսինքն I. Առաջնորդող յօդուած-
ներ. II. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ (հասարակական, դատաստանական, տնտե-
սական և այլն) թղթակցութիւններ, լուրեր. III. Կառավարչական կարգադրութիւններ. IV. ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր. V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. VI. ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ և ԲՈՐՍՍ. VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆելիտոններ, ճանապարհորդութիւններ, ազգայրական,
ուսումնական յօդուածներ, վէպեր և այլն. VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
Յայտարարութիւններ ընդունվում են ամէն լեզուներով: Վճարը՝ բառին 2 կոպէկ: Տօն անգա-
մից աւելի տպվող յայտարարութեան համար Նշանաւոր գինով կը լինի:
Խմբագրութիւնը հրատարակող ԳԻՐԳՐՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց բարեգործական
ընկերութիւնը. Յորհանդիս թանգարանու աւելում.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փարի-
զի վերջին դէպքերը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Պատկերներ վասպուրականի հայոց կեան-
քից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Վաղը, կիրակի, ամսին 15-ին, առաւօտեան
ժամին 11-ին, Թիֆլիսի Գումայի դահլիճում Նշա-
նակած է կովկասի Հայոց Բարեգործական ընկե-
րութեան ընդհանուր ժողովը: Ժողովը գործն, այդ
օրը, պիտի լինի ընտրել ընդհանուր ժողովի նախա-
գահ և քարտուղար, խորհրդի 4 անդամ և 5 փոխ-
անդամ, առաջինները փոխանակ՝ որոնք լրացրել
են իրանց պաշտօնավարութեան ժամանակը, և մի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆ

(Խմբագրութիւններից)

Ինչպէս ընթերցողը տեսաւ, Չըթլենց տանը
հայն ուսումնական պատահալով ու դա-
նակին Չը կայ նաև ձեռք սրբելու որ և է դեմ-
ջակ: Այդ է պատճառը, որ սեղանը հաւաքելուց
անմիջապէս պատանիներից մինը բերում է կոնք,
իսկ միւսը՝ ջուր, սպասն և դեմքակ: Հաջի աղա-
յէն յետոյ ձեռքերն ու բերանը լուսնում են
կարգով ամենքը:

«Մարտողական»,—լսվում է փոխադարձաբար
չորս կողմից՝ լուսնուկում աւարտողի համար:

Հաջի աղան «չիլարայ» (սիլարայ) չէ իւր-
մում: *) ուստի և աղաներից միմիայն վաթսուհ-
ամուսյ մահաբաի Միլիթը ունի արտօնութիւն
նրա ներկայութեամբ ծուխ հանելու բերանից:
Միւս եղբայրները քաշում են ծածուկ, իրանց սե-
նակների մէջ: Համարձակ հիւրերը ազատված

*) Այս դարձուած թիւրքերէն է: Թիւրքը եր-
բէք չէ ասում սիլարայ կամ թիւթիւն «բաշկի»,
«ծիլի», այլ անպատճառ. «խմի» (խմալ):

վերաստուգող յանձնաժողով՝ որի գործը պիտի
լինի ստուգել խորհրդի կողմից մատուցված հա-
շիւը 1886 թիւի դրամական ելմուտքի:

Ընկերութիւնը առաջիկայ կիրակի օրը կը լը-
րացնէ իր գոյութեան վեցերորդ տարին: Վեց
տարի առաջ, ճիշդ այդ օրը առաջին անգամ
բացվեցաւ ընդհանուր ժողովի առաջին նիստը և
կատարվեցան առաջին ընտրութիւնները: Ընկե-
րութիւնն այդ առաջին օրն ունէր 220 գործա-
դիր անդամ, իսկ ժողովին ներկայ էին 122 ան-
դամ: Ընկերութեան հաստատութիւն գտնելը իշ-
խանութեան կողմից՝ աւետեց ընդհանուր ժողո-
վին առաջին հեղինակն ընկերութեան, պ. բժիշկ
Բաղդատ Նաւասարդեան:

Մեր լաւ միտն է թէ ինչ բարի յուզմունքով և
ինչ յոյսերով լցված էին ժողովականների սրտերը
այն օրը, այն ժամերին, ուր ընկերութիւնը իր
առաջին քայլն էր անում, ընտրում էր իր առա-
ջին խորհուրդը և յանձնում էր նրան իր նախ-
դիւնը:

Այն օրից այսօր ահա վեց բոլորակ տարի ան-
ցաւ: Մէկ մէկ աչքէ անցուցանել այդ տարիները

են այդ արդիւնքից, ուստի ես և մուղսի Միլիթը
ամենայն հպարտութեամբ հանում էինք մեր բե-
րանից ծիւր ամպերը: Մի-մի ֆինջան դառն սուրճ
էլ խմելուց յետոյ ամենքս պատրաստվեցանք խօ-
սակցութիւն բանալու:

—Էսօր առաջնորդին դնացի, հաջի աղայ,—ա-
սաց նրան Յովհաննէս աղան:

—Է՛, ընդունեց հրաժարականդ:

—Չէր ընդունիր, բայց հազար ջորով համա-
ձայնեցուցին:

—Օրհնեմ է Աստուած:

—Բայց մի պայման դրեց. պէտք է մեզմէ մէկը
անպատճառ թաղական: *) մնայ...

—Ալլահ, Ալլահ...

—Կարելի չէ, հաջի աղայ,—հանդարտեցնում
էր նրան առաջինը,—դու դիտես մեր տան անու-
նը. ժողովուրդը իրար կանցնի: Կասեն թաղական
խորհրդարանը կը քակենք, եթէ Չըթլենց անէն
էնտեղ մարդ չը տեսնենք: Առաջնորդը բանի դիր
ուղեց «պահպանել» սակ վրաս, չը թողի: Վերջի-
նպէս կարգադրեցինք, որ Պօղոսն երթայ իմ
տեղ...

*) Ըստ սահմանադրութեան, տաճկահայոց ա-
մեն մի թաղ ընտրում է իր աղային: Գործերի
համար եօթ հոգուց բաղկացած մի հոգաբարձու-
թիւն: Այդ վարչութեան անդամները «թաղական»
են կոչվում և նրանց գլխաւոր պարտաւորութիւն-
ներն են. 1) թաղի եկեղեցին պաշտօն պահել, 2)
ուսումնարանը բարեկարգել, 3) թաղեցիկների վե-
ճերը ընձնել ու վիճաբանել հաշտեցնել, 4) թաղի
աղբատների համար եկեղեցու արդիւնքներից ապ-
րուստ հայթայթել:

սիրտ չեմ անում... Եւ ահա տեսնում ենք մեր
ընկերութիւնը մի վեց տարեկան դժուարին ճանա-
պարհ անելուց յետ, դարձեալ մեր աչքի առջև,
չունչը ծոցում, թէև յոգնած ու տանջված և իր
անդամների թիւը նուազած, սկզբնական 720-ից
այս օրվան օրս 170-ի իջած, և կատարելի գոր-
ծերից շատ փոքր միայն կատարած, իսկ կատա-
րածն էլ ամենահեշտը, որպիսի է աշակերտներին
և ուսանողներին ամսական հինգ-հինգ և տասն-
տասն ռուբլի թոշակ տալը և ներկայացած կա-
րօտներին և աղքատներին թեթև ինչ նպաստ և
ողորմութիւն բաշխելը: Նա իր նպատակին հաս-
նելու համար պիտի կատարէր, ըստ իր ոյժերի
զարգացման, կանոնադրութեամբ իր առջև դըր-
ված 8 կէտեր, շատ օգտակար և կարևոր ու
հարկաւոր կէտեր (տես կանոնադրութիւն § 2).
բայց, ախտս, նրա ոյժերը, իր գոյութեան եր-
բորդ տարուց սկսած, դադարեցան զարգանալուց
և նրա գործունէութիւնը ճակատագրօրէն կծկված
մնաց թոշակ և ողորմութիւն բաշխելու, որպէս
ցոյց են տուել մեզ ընկերութեան հաշիւները:
Այսօր նա մեր առջև է 25,000 ռ. դրամագլխով
4,200 ռ. գումարի նախահաշիւով և գործունէու-
թեան այն վիճակում, որ վերև յիշեցինք:

Բայց, որպէս և է, ընկերութիւնը կայ, կանք
և մենք, և ընկերութիւնը մենք ենք. նրա աջո-
ղութիւնն ու ձախողութիւնը, գործունէութիւնն
ու անգործութիւնը թեզանով և մեղանից է: Ճը-
մարիտ է, գործողութեան դեկը խորհրդի ձեռ-
քովն է, բայց այդ խորհուրդն ընտրող և նրա
գործերի հաշուետեղ մենք ենք. եթէ ընտրում
ենք առանց խորհրդանշու և հաշիւ ենք տես-
նում առանց ընդունու, թիւը էլ մեզ չը դնենք
խորհրդին. սա կատարելապէս մեր անդադար-
ձութիւնն է, գործողութեան հայելու մէջ դա մեր
պատկերն է. ուրեմն ուղղութիւնը սկսենք մեզա-
նից: Եւ նախ և առաջ չը ծուլանանք կամ, աւե-
լի վատը, անտարբեր չը լինենք վաղեան օրը
բազմութեամբ ներկայանալ նշանակված ժողովա-
տեղին: Ընկերութեան առաջին ընդհանուր ժողո-
վը, 1881 թիւի Նոյեմբերի 15-ին, 122 հոգուց էր
գումարված. այնուհետև այդ թիւը երթալով զգա-
լապէս նուազել է և 10 հոգիով ես ժողով է կա-
յացել: Այդքան ցրտութիւնը Յաւալի և դժուր դը-
րութիւն ընդհանուր ժողովի նախադասիւր և խոր-
հրդի անդամներին: Ամեն անգամ կարծես լըս-
վում էր ամայի դահլիճի անկիւններից և խորշե-

—Ես էն խնկթերի հետ գործ չունեմ,—աճա-
պարեց Պօղոս աղան թաղական եղողը պէտք է
իր բոլոր գործերը թողնի, որ ամէն մէկ խնկթի
հետ կուր անի: Մէկ չէ, երկու չէ, քանի մար-
դու պէտք է բան հասկացնես. եօթ թաղական,
ու թ վարժապետ, չորս քահանայ, մէկ հարկւր
հատ էլ ուրիշ խնկթեր... Բան կասես, կը համո-
ղես, խորհուրդ կը տաս,—իդուր, ձի է հասկա-
ցող.—հա Սահմանադրութեան տեսրակը կը բա-
նան, կը խճեն աչքը...

—Սահմանադրութիւն... հաւաքեց հաջի աղան,
խոր հոգոց հանելով:

—Փո՛ւճ էլնի էտա Սահմանադրութիւն,—վրա
բերաւ զայրացած պ. Պետրոսը—ամեն տղու բե-
րան երեք կանգուն լեզու կայ մեկայ (հիմայ):

—Ողբի, Յովհաննէս,—դարձաւ հաջի Ստեփանը
փաղաքանօք դէպի նա—Պօղոսը աղորթ (ճշմա-
րիտ) կասի: Մեր տան պատուին կը վայելի, որ
ամէն մարդ հաշի վեր ձէ... «Տէր, դիր պահպան
բերանդ իմը»... Դու դիտես Չըթլենց տան ա-
նուս, մի կտուրը խօսք էր—«մի կրնար դէմ
դնել: Ժողովուրդը փորձած էր, որ մենք իր բա-
րեկամն էինք, իր հայրն էինք, աղէկ կուղէինք,
դէ՛ չէինք ուղեր ֆանի ջրաղաց շինեցինք, քանի
արտ առնէք, քանի խանութ «վազըֆ» *) անել
տունը... եկեղեցին պաշտօնեցուցինք, վարժարան
շինեցինք, վարժապետ կարգեցինք: Քառասուն

*) «Վազըֆ» անել (թիւրքերէն) որ և է շի-
նութիւն, ասել է դայն եկեղեցապատկան դարձ-
նել:

րից չար դեմերի ծաղրը այդ ցաւալիների գլխին
արձակված: Այդպիսի խայտառակ պայմանի մէջ
միթէ սիրտ է մնում գործելու... Ամեն աշխոյժ
կը մարի ու կը մեռնի այդ տեսակ հանգամանք-
ներում:

Երբ մենք, լուկ խօսակցութեան նիւթ տալու
մտքով, մանաւանդ երբ ուրիշ աւելի հետաքրքրե-
լի նիւթ չունենք մեր ժամանցութեան համար,
հարցնում ենք միմեանց թէ ինչ է անում Հայոց
Բարեգործական ընկերութեան խորհուրդը, ամե-
նեին չենք խղճահարվում ամբաստանել խորհուր-
դը իբրեւ անգործ և մինչև իսկ անդունակ, և
այնպէս ենք հասկացնում միմեանց, որ, եթէ
մենք լինէինք խորհրդում, կարևոր և հիմնա-
ւոր գործեր կանէինք և հասարակութեան ուշա-
դրութիւնը և համակրութիւնը կը վաստակէինք
ընկերութեան կողմը. մենք անցեալ և ներկայ
պաշտօնավարների նման միայն փող հաւաքելով
և հաւաքածն էլ անձեռնմխելի դրելով չէինք շա-
տանայ. այդպէս անելն յետադէմ և անմիտ տըն-
տեսութեան գործ է. այլ մենք գումարները կը
գործադրէինք, ժողովրդի աչքին մի դալի և շատ
հաճոյական ու օգտակար բան կերեցնէինք և
մեր ծախսած փողի տասնպատկով նորից յետ
կը ստանայինք՝ թէ անդամների թիւի շատութիւն
և թէ առատ նուէրներ ձեռք բերելով: Այդպէս
մենք խօսում ենք՝ իրար աչքի մէջ նայելով և
գննելով թէ որքան բարկացանք, մեր հասկացո-
ղութեամբ և գործելու ընդունակ չնորոյ, դիմա-
ցինք աչքում կարծես իրար նոր կշռէինք ու ճա-
նաչէինք: Կեղծաւորութիւն: Ո՛վ է արդիւն մեզ
խորհրդի անդամ ընտրվելու: Ի հարկէ ոչ ոք:
Մենք ենք անձնական դիմումներով խոյս տուել
ընտրվելուց և այդպէս եղբ քաշված՝ հեռուից դի-
տում և ըննադատում ենք գործողներին: Այդ ա-
ւելի հեշտ է, քան ասպարէզ մտնել և մեր կար-
գում քննադատութեան և ծամելու նիւթ դառնա-
լը: Այն հաստատ գիտենք, որ մենք էլ մի հիմ-
նաւոր ու հաստատ բան անելու յօժարութիւնը
չունենք, կամ մի հաստատուն կարելի և համե-
րութեան պակասութիւնից, խուսափում ենք խո-
չնդոտն եղող հանգամանքների երեսից:

Ամօթ է մեզ համար, մենք՝ որ, Կովկասի
աղբերի մէջ պարծենում ենք մեր անդամիկ
ծագմամբ, անցեալ պատմութեան մէջ վայելած ա-
ռաջնակարգ նշանակութեամբ և փառապանծ ա-
րաքներով, և որ այժմ իսկ նրանց մէջ մեր կէս

տարի մեր հանգուցեալ Աւետիս եղբօր հետ երես-
փոխութիւն արենք, մեր կարողութիւնը փչացու-
ցինք, որ ինչ է Աստուծոյ տուած շնորհի, մեր աղ-
ղանքի հացը կտրեցինք, որ ինչ է աղղի տղանե-
րը անուսում չը մնան...

—Ինոր համար էսօր մեր պատիւ կը պահեն,
նկատեց հեգնօրէն պ. Պետրոսը:

—Ա՛խ, Պետրոս,—պատասխանեց ցաւով ծե-
րունին,—մեր պատիւը Աստուած պիտի պահէ, չէ
թէ երէկվայ նորեկներն: Մենք ի փառս Աս-
տուծոյ ենք աշխատել, չէ թէ մեր Բայց միթէ
մեզ պատիւ կը պակսի: Քանի տուն գիտես Վա-
նայ մէջ որ Չըթլենց չափ պատիւ ունենան էս
դառն ժամանակի մէջ... Բայց Վայ քաղաքին
այնմիկ, որոյ թաղաւոր մանուկ է... Մեկայ
պատիւը պատուաւորինը չէ, որդի... կասես հա-
ւասարութիւն է, սահմանադրութիւն է... կասեն
ս մեն մարդ պատիւ ունի... ծերունին շուշ
տեց այդ «ամեն պարզ» մի առանձին ցաւով և
լուց յուզմունքից:

Բայց պէտք է ասած, որ հակառակ պ. Պետրո-
սի դժգոհութեան, Չըթլենց տունը պահպանել էր
դեռ ևս մեծ հեղինակութիւն, մանաւանդ ուսմիկ
ժողովրդի առաջ, որ դիտէ յիշել իր մեծ բարե-
բարներին: Առաջ բերեմ այստեղ մի իրողութիւն,
որ կարող է ամէն ինչ պարզել: Չըթլենց թաղի
եկեղեցին փոքր ինչ հեռու է բնակութիւններից,
մի ձորակի մէջ: Ամբողջ 30 տարի, երբ կիրակի
առաւօտներ ժամը կարճակուէր, երեք հարկւրի
չափ ժամաւորները սպասում էին, որ նախ

**) Նախ[ի] լառը, որ զործածական է հա
մեր կողմեր, հետաքրքիր տղաւաղումն է արա
կան Վանէ[ի] ի (նշողք):

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք խաղիկային Մի-
լան քաղաքից, իտալացի երիտասարդ երաժիշտ
Կամիլլէ Բոնչիի (Camille Ronchi), երկու նոր ե-
րաժշտական գործեր, այն է երկու մաղուր-
կան երկ պիտի համար, որոնցից մինը կրում է
«Աստղ Արմենիայի» (l'Etoile de l'Arménie) իսկ
միւսը «Երասիսի ափերում» (Aux bords de l'A-
raxe) վերնագիրը: Իւրաքանչիւր տետրակի գինը
1 րուբլի է (կամ 2 Ֆրանկ և 50 սանտիմ): Այդ
երկու երաժշտական պիեսները տպագրված են
Միլանում Բայց այդ երկու մաղուրկաները ոչինչ
հայկական, ասիական, կամ արևելեան եղանակ-
ներ չեն յիշեցնում, այլ բուն եւրոպական եղա-
նակների վրա են հեղինակված:

Մեր տաղանդաւոր դերասան, պ. Աղաման, այժմ իր ներկայացումները տալիս է Օդէս-
ՅՈՒՄ: Այս օրերս մեր ձեռքն ընկան երեք հատ
Օդէսայի ռուս լրագրիչներ, — և երեքն էլ ան-
նկարագրելի գովասանքով և հիացմունքով են
խօսում Աղամանի խաղի մասին, մանաւանդ
«Համլէտի» դերում: Օդէսայում նրան աւելի բար-
ձր են դասում, քան Բարնային և Շէկսպիրի դե-
րերի ուրիշ աշխարհաճակ կատարողներին: Լը-
րագրիչներէն երեւում է որ «Համլէտից» յետոյ Ա-
ղաման պիտի բեմ դուրս գայ «Օտելլո» պիեսա-
յում և այնուհետև թէ Շէկսպիրի և թէ Ռուրի-
յայտի հեղինակութիւնները զիջաւոր դերերում
լինէ՞ն հաւատանք Օդէսայի լրագրիչներին, այդ ըս-
տովով հասարակութիւնը կատարելապէս յախ-
տակված է երևում Աղամանի խաղով:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, ինչ-
պէս մեզ հեռագրում է «Հիւսիսային դործա-
կութիւնը», որ պետական խորհրդին ներկայաց-
րած է մի ծրագիր՝ կազմակերպել սահմանային
պահպաններից մի դորաբաժին, նման ժան-
դարմաների դորաբաժինին: Այդ սահմանապահ դո-
րաբաժինը կաւելացվի երկու բրիգադներով:

«С.-Петербург. Вѣдомости» լրագիրը հաղորդում
է, ինչպէս հեռագրում է մեզ «Հիւսիսային դործա-
կութիւնը», որ դիտարկութիւն կայ տեղական
կարգութիւնները վերանորոգութիւնները գործա-
դրել 36 նահանգներում, որոնց մէջ գոյութիւն ու-
նեն ղէմստօրի հաստատութիւնները: Բէֆօրմայի
զլխաւոր հիմքը լինելու է ղէմստօրի զլխաւորների
պաշտօնի հաստատութիւնը: Չէմստօրի զլխաւոր-
ին կը յատկացվին նախկին հաշտարար միջ-
նորդների ֆունկցիաները, ժամանակի պահանջ-
ման համեմատ մի քանի փոփոխութիւններով:
Իւրաքանչիւր գաւառը կը բաժանվի չորս մասերի
վրա, որոնց իւրաքանչիւրի մէջ կը լինի մի մի
ղէմստօրի զլխաւոր, որի պաշտօնը լինելու է վե-
րահանգի շինական վարչութեան կանոնաւոր ըն-
թացքի վրա: Չէմստօրի զլխաւորի պաշտօնի վրա
կը նշանակվին, ներքին գործերի մինիստրի ձեռ-
քով, նահանգապետի առաջարկութեամբ, ազնա-
կան դասակարգին պատկանող անձինք, որոնք
ունեն մի յայտնի կառավարական ցէնը և իրա-
ւունք ունեն մանկ պետական ծառայութիւնը:
Նախապետութիւնը կը տրվի տեղական կառու-
ծատէրերին, ազնաւական դասակարգին, որոնք
ծանօթ են երկրի տնտեսական պայմանների,
բարձր ու վարձի և կացութեան հետ: Պաշտօնը
կը տրվի այնպիսի անձանց, որոնք հասակը 50
տարեկանից չէ անցնում: Առաջվա ծրագրով դի-
տարարութիւն կար ղէմստօրի զլխաւորներին
յատկացնել բացի վարչական ֆունկցիաներից, և
հաշտարար դատարանների իրաւասութիւնն էլ, ո-
րոնց պաշտօնը և պէտք է վարել նրանք, բայց
նոր պարէկտով ղէմստօրի զլխաւորները ծանրա-
բեռնված չեն լինի դատարարութեան պարտաւո-
րութիւններով:

ԿԱՐՄԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Այստեղ
սկսել են քանդել Կարսի հնադարեան երկկարգ
ամրութիւնների շարքերը: Գուցէ հեռու չէ այն
ժամանակը, երբ այդ ամրութիւնների զոյգութիւնը
որոնելու են միմիայն պատմութեան մէջ: Ամ-
բողջ մնացած աշտարակներից մինի վրա անցնալ
օրը կարգացի ղեկընկապէս պահպանված հետե-
ւեալ արձանագրութիւնը (Բովիս ՌԶԳ, ի թաղա-
ւորութեան Ռուստգանա Հաթապահութեան ի-
վանէի մը կարուց բրիտանիքս շինեցաք զորք-
ներս հալալ արդեանց մերոց):»

Մեզ գրում են ԿԱՐՄԻՑ, որ նոյեմբերի 6-ին ե-
ղանակը դեռ ղեկընկել էր այդտեղ, բայց այդ օ-
րից յետոյ ձիւնը սկսեց տեղալ: Այժմ, ինչպէս
մեր թղթակիցը գրում է, կենսական պիտոյքները
կարում հետզհետեւ թանգանում են. ալիւրը ար-
ժէ այժմ 1 րուբլի 30 կոպէկ պուրը:

Գարձեալ խնդրում են 1886 և 1887 թւերի
մեր այն բաժանորդներին, որոնք մինչև այժմ չեն
վճարել մեզ իրանց բաժանորդագրին, շուտով
հասցնել «Մշակի» խմբագրութեանը իրանց վրա
մնացած ապաւոկները:

Մեզ հաղորդում են, որ թէ ռուսաց և թէ վը-
րաց ներկայացումները, որոնք պէտք է սկսվէին
նախկին Արծրունու թատրոնում հոկտեմբերի
15-ից, չեն կարող սկսվել նոյն իսկ ղեկտեմբերին,
որովհետև թատրոնը, որը այժմ վերանորոգվում
է, դժուար թէ մինչև այդ ժամանակ պատրաստ
լինի:

Մեզ հաղորդում են որ նոյեմբերի 10-ին, կաթո-
ղիկոսի օժման տարեգարծի օրը, Թիֆլիսի հայոց
ուսումնարանների աշակերտների և աշակերտու-
հիւների ներկայութեամբ վաճառի մայր եկեղեցում
պատարագ մատուցվեց: Այդ առիթով Թիֆլիսի
Ներսիսեան դպրոցի տեսուչ Սարգիս քահանայ
Բէգեազարեանը մի երկուս և վերին աստի-
ճանի ոգևորված ատենախոսութիւն արեց, և ի
միջի ալոց նկարագրելով կաթողիկոսի ընտրու-
թիւնը, հաստատութիւնը և դպրոցների բացումը,
վերջացրեց իր ոգևորված ճառը գովելով կաթո-
ղիկոսին:

Մեր բարեկամներից մէկը ուղարկել է մեզ ե-
րեկ Թիֆլիսից ոչ հեռու գտնվող Կրծանիսի իր
այգիէն մի շատ հազաւոր ընծայ, — դրանք մըր-
դեր են (սպիտակ թուրք և խնձորներ), որոնք
այս տարի երկրորդ անգամ են հասել պտղատու
ծառերի վրա: Այս տարի եղանակը այնքան չոր
է եղել, որ Թիֆլիսի չորս կողմ գտնված մի քա-
նի այգիներում պտղատու ծառերը նորից կա-
նաչեցան, ծաղիկեցան և վերջապէս մորեք տուե-
ցին, որոնք այժմ, նոյեմբեր ամսին, մինչև անգամ
հասնել կարողացան:

Այս օրերս Քարափի-Թաղ անուանված թաղում
մի տարրիկ աղ հարսանիք էր կատարվում: Նորա-
հարսի տանը հարսանիքի ամեն պատրաստու-
թիւնները տեսնված էին, հիւրերը հաւաքված էին,
նորահարսը դուգված էր և հարսանիքավայել ու-
րախութիւն էր կատարվում, մինչև նորափեսայի
գալը: Նորափեսան ևս ամեն պատրաստութիւն-
ները տեսած էր, քահանայից վկայականն առել
էր և խաչեղծօրն ևս հրաւիրել էր. ուրեմն մնում
էր միայն եկեղեցին դնալ և պատվել: Բայց ինչ
դժբաղդութիւն. նորահարսի տանը սպասում էր
նորափեսային մինչև ղիշերվայ ժամի 11—12,
իսկ նորափեսան չը կայ, անհետացել է. նորա-
հարսի ծնողները և տղականները սկսում են
որոնել նորափեսային, բայց չեն գտնում: Հետե-
ւեալ օրը, նորափեսային գտնում են խեղդված մի
չինովեան մէջ, ուր նա աշխատում էր, որպէս
նախնար:

Ստացանք պ. Ս. Թառայեանից նրա մի քանի
հեղինակութիւնների ժողովածուն, որը տպված է
Բաղդադի Գրքոյի մէջ ղեկողված են երկու վե-
պիկներ և մի քանի ոտանաւորներ: Վէպիկների
միւսը շատ համակրելի է. միայն իրեն վիպական
դրամը մի աչքի ընկնող պակասութիւն ունի,
այդ այն է որ հեղինակին անձնաւորութիւնը ամեն
թուգի կանգնած է ընթերցողի առաջ: Նա է դա-
տում և բացատրում, չը թողնելով որ ընթերցողը
ընթերցողութիւններից: «Աւաղակապետ» վերնագրով
վէպի մէջ հեղինակը ուղում է ցոյց տալ, և այդ
էլ շատ իրաւացի կերպով, որ «հասարակութեան
անդամները և նրա վատ կազմակերպութիւնը ի-
րանք են ստեղծում պատուհաններ և տխուր երե-
ւոյթներ: Գիրքը կապեալան դրամադուրանոցի
հրատարակութիւն է, ղինն էլ թանգ չէ նշանաւ-
ված, այն է 20 կոպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓԱՐԻՋԻ ՎԵՐՋԻՆ ԴԵՊԵՐԵ

Թէ հեռագիրը և թէ լրագրիչները մէկը միւսից
աւելի յուզել, մէկը միւսից աւելի ցաւալի լուրեր
են բերում փարիզից, որտեղ այժմ քաղաքական

չըջաններում ամեն բան տակն ու վրա է եղած:
Կատարել կերպով ընդունում են այնպիսի անհրաժեշտ
գործողութիւնների ղէմ, որոնց հեղինակը համար-
վում է Վիլսոն, և այդ ընդունումը այնքան առաջ է
գնացել, որ հրապարակ է դուրս բերել հանրա-
պետութեան նախագահի հրաժարականի հարցը, և
այդ էլ մի այնպիսի ժամանակ, երբ մինիստրու-
թիւնը հրաժարված է և նոր մինիստրութեան
կազմակերպութիւնն էլ դժուարութիւնների է
հանդիպում: Վիլսոնի վերաբերութեանը բացված
են այնպիսի ըստմունքի գործեր, որ հասարակաց
կարծիքը իր զրդուման մէջ անցել է իր սահմանը
և զանազան կողմերից Գրէվիի հրաժարականն են
պահանջում, այն Գրէվիի, որի վերին աստիճանի
ազդեցութիւնը և ղէպի հանրապետութիւնը ունե-
ցած անկեղծ հաւատարմութիւնը լաւ ծանօթ է
Իւրաքանչիւր ֆրանսիացու: Բայց ո՞վ է այդ Վիլ-
սոն, որ այդքան աղմուկների պատճառ է դար-
ձել, և որ այդպիսի մի ստուեր է գցում զառա-
մալ ծերունու վրա: Վիլսոն մի առաջնակարգ
գործիչ չէ. նա ոչ նախագահ է պարլամենտի, և
ոչ էլ նախագահ սենատի. նա մինիստր էլ չէ,
այլ մի հասարակ պատգամաւոր, և որ այս ղէպ-
քում զլխաւորն է, նա հանրապետութեան նախա-
գահի՝ Գրէվիի փեսան է: Վիլսոն այժմ մեղադր-
վում է զանազան տեսակ ղեղձումների և եթէ
կարելի է ասել, նոյն իսկ չարագործութիւնների
մէջ: Նա կազմակերպել էր իր արբանեակների և
կողմնակիցների մի անազնի խումբ, և փողով վա-
ճառում էր չքանչանքներ, և ամս թէ էլ ի փողով
սրան կամ նրան էր տալիս պետական կապա-
ները: Փողի համար այդ մարդը իրան թող է
տուել ոտի տակ տալ պետական շահերը, պետու-
թեան պատիւը և սրբութիւնները, և այդ գործե-
րի մէջ նա հիմնվում էր իր աներոյ՝ Գրէվիի
վրա ունեցած իր ազդեցութեան վրա, շատ անգամ
նրան խաբելով, և գործածելով հարկաւոր ժամա-
նակը նախագահ Կալան Կնիքը, քանի որ
իր փեսայ նա ազատ մտքով ունէր Գրէվիի մօտ:
Այդ կեղտոտ գործերը ընմով են ամենայն ե-
ւանդով, և ընմութիւններից երևում է, որ հան-
րապետական կառավարութեան պաշտօնեաներից
ոմանք գործում են այնպիսի ղեղձումներ, որոնք
տեղի են ունեցել Նապոլեոն երրորդի կառավա-
րութեան ժամանակներում: Այժմ արդէն իրողու-
թիւն է, որ շատ բարձրադիր անձինք զբաղված
են պետութեան փողով յափշտակելով: Գոյա-
մէջ զլխաւորն է Վիլսոն, որ Գրէվիի փեսայ լի-
նելով՝ մեծ արատ է բերում նրան, և այդպիսով
աղմուկը և դժբաղդը այնքան սաստկացել է, որ
շատերը Գրէվիի հրաժարականն են պահանջում:
Միւս կողմից միապետականները իրանց ղուլը
բարձրացրել են, և օգուտ քաղելով այժման
խառնակ դրութիւնից, երազում են միապետու-
թիւնը վերականգնեցնել: Մամուլը վերին աստիճանի
յուզված է և կատարել կռիւ է մղում՝ մեծ մա-
սամբ կուսակալական ոգով: Միապետականները
արդէն հրապարակով «Vive le roi» են գոչում,
իսկ հանրապետական կուսակցութեան մի նշանա-
ւոր մասը պահանջում է Գրէվիից, որ նա հրա-
ժարական տայ: Նախագահի հրաժարականի հար-
ցը այնքան առաջ է գնացել, որ արդէն խօսվում
է, թէ ո՞վ կարող է նրա տեղը բռնել. խօսում են
Ֆրէյսիէի, Ժիւլ Ֆրէյսիէի, Ֆլուրանսի և մի քանի
ուրիշների մասին: Թէ արդեք այս խառնակ
դրութեան մէջ Գրէվի կը մնայ իր պաշտօնում,
թէ նրան կը փոխարինի մի ուրիշը, դժուար է
այժմանից ասել, բայց չէ կարելի անկեղծ սրտից
չը ցանկանալ, որ այդ բոլոր իրադարձութիւն-
ները, որպէս ղի հանրապետութեան թշնամի-
րը միջոց չունենան նրա ոտների տակ փոս փո-
րելու...:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Պէշտում հրատարակվող «Revue de l'Orient»
չարաթիւերը հաղորդում է որ Էրզրումի մէջ,
թիւրքաց կառավարութեան ձեռքով կառուցվող
նոր ամրութիւնները վերջացած են արդէն:

Իշխան Բիսմարկ մտադիր է, ինչպէս հաղոր-
դում են դերմանական լրագրիչները, դաշնակցա-
կան խորհրդին ներկայացնել մի օրինադրած, սօ-
ցիալիստների վերաբերեալ բացառական օրէնքը
զարձեալ երեք տարով երկարացնելու մասին:

Գերմանական թագաւաճանի ծանր հիւան-
դութեան պատճառով կայսերական տան պատ-
կանողները մի ընտանեկան ժողով կազմեցին:
Այդ ընտանեկան ժողովում խորհրդակցում էին

այն մասին, որ յարմար է վերցնել թագաւաճա-
նից գահի բոլոր իրաւունքները և յանձնել այդ
իրաւունքները պրինց Վիլհելմին:

«Gaulois» լրագիրը տպել է նորերում մի
յօդուած «Vive le roi» վերնագրով (կը նշանակե-
կեցցէ թագաւորը), որի մէջ ուրախութիւն է յայտ-
նում թագաւորի վերադարձի համար: Փարիզում
ներկայումս գործերը այնքան խառն կերպարանք
են ստացել, որ լրագրիչների կողմից այդպիսի ան-
տեղի ցոյցերը անգամ զարմանալի չեն:

Միացեալ-Նահանգներում արդէն սկսված են
ընտրութիւնները՝ մի քանի տեղերում հանրապե-
տականները յաղթութիւն տարան, բայց ընդհան-
րապէս մեծամասնութիւնը էլի ռամկապետական-
ների կողմն է, այնպէս որ ենթադրում են, որ
Կլէվլենդը նորից կընտրվի, իսկ եթէ նա հրաժար-
վելու լինի, նրան կը փոխարինի մի որ և է ռամ-
կապետական կանդիդատ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

Կ. ՊՈԼԻՍ, 11 նոյեմբերի: Սուլթանը կարիոր
համարեց բողոքական և եղիպտական հարցերի
վերաբերմամբ ոչինչ վճիռ չը կայացնել, մինչև
որ Բերլինի թիւրքաց դեսպանից տեղեկութիւն
չը ստացվի թագաւոր Կայսրի և Վիլհելմի կայսրի
ունեցած տեսակցութեան մասին: Անկապա-
ծելի է, որ այդ տեսակցութեան ժամանակ ար-
տայայտված են եղել խաղաղասիրական ցանկու-
թիւններ: Զանազան լուրեր են պտուտ ալն
մասին, որ իրեն թէ Աստորիան խորհուրդ է
տուել Սուլթանին պրինց Ֆէրիդինից բողո-
րական իշխան ընդունել: Մինչև անգամ անկա-
ցնում են, որ և Անգլիան հաւանութիւն է տալիս
այդ բանին: Այնու ամենայնիւ այդ լուրերը հաս-
տատ լինելու ընաւորութիւն չունեն:

ՍՕՖԻԱ, 11 նոյեմբերի: Բոլղարական ազգային
ժողովի անդամների մեծամասնութեան խորհր-
դում վճռված է մի առաջարկութիւն ներկայա-
ցնել ժողովին՝ Կարապիւլովի, Յանկովի և Նիկիթո-
բովի դէմ ընդունելու բանալու մասին:

ՊԵՏԵՐԲՈՐԿ, 12 նոյեմբերի: Պետական խորհր-
դին ներկայացրած է մի առաջարկութիւն՝ յոճա-
վարի 1-ից Ուրալեան հանքագործարանական երկա-
թուղին նկատելիութեանը հիմնին երկաթուղու հետ
միացնելու մասին: Այդ զգին կը տրվի Պերմ-Տիւ-
մենի անունը: Լուրերին նայելով, զալ տարվա-
նից կը սկսվին Սիբիրի երկաթուղու դժի շինու-
թեան նախապատրաստական աշխատանքները:

ՊԵՏԵՐԲ, 12 նոյեմբերի: Գոյգործական գիւղի
ընտելիներից երկուսը, որոնք մեղադրվում են
կառավարիչ Ստանիսլավսկու սպանութեան մէջ,
կախվեցան: Մնացած 12-ը դատապարտեցան տա-
ժանակիր աշխատանքներին:

ՕՐԻՍԱ, 12 նոյեմբերի: Ռուսաց նաւազնացա-
կան ընկերութեան վարչութիւնը համոզված է, որ
«Սինէլուս» նաւն է խորատուել նոյն ընկերու-
թեան «Վէստա» նաւը, որը գնում էր 35 մար-
դով և որոնցից ոչ մէկը չէ փրկվել:

ՓԱՐԻՋ, 12 նոյեմբերի: Նախագահ Գրէվի վրձ-
նեց հրաժարական տալ: Նա առաջարկեց Սիբիրի
նոր մինիստրութիւն կազմակերպել, որը և կօդ-
րէս կը գումարի: Գրէվի կը հրատարակի մի հա-
ղորդագրութիւն, որով կը յայտնի, որ ստիպված
է հրաժարական տալ, քանի որ անկարելի է շա-
րունակել երկրի կառավարութիւնը, դուրս հետ
միտան նա իրաւ պատասխանատու չի համարի
այն բոլոր ներքին և արտաքին բարդութիւնների
համար, որոնք նա նախատեսելու է:

ԲԵՐԼԻՆ, 12 նոյեմբերի: Այսօր տեղի ունեցաւ
ընկալաւոր բացումը: Գահական ճառի մէջ այն
միտքն է յայտնվում, որ Գերմանիայի արտաքին
քաղաքականութիւնը ճշտում է ամբողջով եւրո-
պական խաղաղութիւնը, պահպանելով բարեկա-
մական յարաբերութիւններ բոլոր պետութիւնների
հետ, և այնպիսի դաշնագրերի ու պայմանագրերի
կապելով, որոնք կարող կը լինեն պատերազմի
վտանգի առաջն առնել և միջոց տալ ընդհանուր
ոյժերով դիմադրելու անարդար յարձակումներին:
Գերմանական պետութիւնը, ասված է նոյն դա-
հական ճառի մէջ, յարձակողական ընթացք չու-
նի, հեռու է հարեան ազգերի վրա յարձակվելու
հակաբերատունական հակումով, նա ցանկանում
է զօրեղ լինել միմիայն դիմադրելու և պաշտպան-
վելու համար: Թէ Գերմանիայի սահմանադրութիւն-
ը և թէ նրա վերահրակաւ հաստատութիւնները
հարեան երկրների խաղաղութիւնը ինքնակամ
յարձակումներով խանգարելու ճշտումները չու-
նեն, իսկ յարձակումներին դիմադրելու և մեր
անկախութիւնը պահպանելու համար մենք դորեղ
ենք և Աստուծոյ օգնութեամբ այնպիսի ոյժ
ձեռք կը բերենք, որ կարող կը լինենք դիմադրել
ամեն տեսակ վտանգներին:

ՊԵՏԵՐԲՈՐԿ, 13 նոյեմբերի: Սրբազան Գիով-
տրի, Նիժնիգորոքեան յաջորդը, տեղափոխված է
յաջորդի պաշտօնով Պոդոլսկի թիւնը: «НОВОСТ»
լրագիրը հաղորդում է, որ առաջին երկաթուղի-

